ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.06.2013թ.
202-ի 3

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
նախագահ պարոն Գագիկ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

2013թ.-ի մայիսի 21-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) իր ելից 201-4 գրությամբ դիմել է Ձեզ՝ խնդրելով ՊԵԿ-ի աջակցությունը ԻԱԿ-ից գանձված ԱԱՀ-ն հետ վերադարձնելու հարցում (ԻԱԿ-ն ազատված է ԱԱՀ-ից, այնինչ վճարել է ԱԱՀ Երեւանի քաղաքապետարանին տարածքի վարձակալության համար 2010թ.-ի հունվարի 11-ից, իսկ ՀԷՑ-ին՝ էլեկտրաէներգիայի մատակարարման համար 2012թ.-ի մայիսի 1-ից):

Դիմումը ուղարկելուց անցել է ավելի քան մեկ ամիս, սակայն ԻԱԿ-ը որեւէ պատասխան չի ստացել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ ընթացքում է ԻԱԿ-ի՝ 2013թ.-ի մայիսի 21-ի դիմումի քննարկումը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում,
2. Ի՞նչ վերջնաժամկետ է սահմանված ԻԱԿ-ի՝ 2013թ.-ի մայիսի 21-ի դիմումին պատասխան տրամադրելու համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կից ներկայացնում ենք ԻԱԿ-ի՝ 2013թ.-ի մայիսի 21-ի դիմումի կրկնօրինակը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան